ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Քահանայական ձեռնադրության արարողությամբ առանձնակիորեն տոնական եւ հանդիսավոր էր սեպտեմբերի 19-ի կիրակնօրյա Պատարագը Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիստ Սբ. Սարգիս եկեղեցում: Սրբազան արարողությանը ներկա էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը, Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության բարձրաստիճան հոգեւորականներ Տ. Տաթեւ արքեպս. Սարգսյանը եւ Տ. Օշական արքեպս. Չոլոյանը, Մայր Աթոռի միաբաններ, Արարատյան Հայրապետական թեմի Թեմական խորհրդի անդամներ, Վազգենյան Հոգեւոր Դպրանոցի սփյուռքահայ բարերար պրն. Նազար Նազարյանը, դպրանոցի եւ Գեւորգյան Հոգևոր ճեմարանի դասախոսներ, հյուրեր:

Սուրբ Պատարագի ընթացքում, ԱՄՆ հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանի ձեռնադրությամբ եւ խարտավիլակությամբ Հոգեշնորհ Տ. Թորգոմ աբեղա Տոնիկյանի, ամուսնացյալ քահանայության կոչվեցին Արարատյան Հայրապետական թեմում սպասավորող յոթ սարկավագներ՝ Տիգրան սրկ. Գափոյանը, Արթուր սրկ. Հայրապետյանը, Արտակ սրկ. Արթենյանը, Նորայր սրկ. Ավետիսյանը, Ռոբերտ սրկ. Օհանյանը, Վարդան սրկ. Բաղումյանը և Հրաչյա սրկ. Խաչատրյանը: Նախորդ շաբաթ օրը, երեկոյան ժամերգության ավարտին, Սրբազան Հոր կողմից կատարվել էր քահանայական կոչման արարողություն, որի ընթացքում նորընծաները հանձն առան «Ամենայն պատրաստակամութեամբ եւ առանց ծանծրանալոյ կալ ի պաշտօնն Աստուծոյ եւ ոչ խափանել զգործն Աստուծոյ վասն մարմնաւոր գործոց» եւ տվեցին իրենց ուղղափառ դավանության խոստովանությունը՝ հատկապես խորհրդաշատ յոթնածայն հնչողությամբ. «Ունիմք զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ... ընդ սուրբ հայրապետսն...»:

Կիրակնօրյա Պատարագի ընթացքում «Ես դնեմ ձեռս ի վերա սորա եւ դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի սա զաստիճան քահանայութեան» խոսքերով Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանը ձեռնադրում է քահանայության կոչվածներին: Այնուհետեւ Սրբազան Հոր օրհնությամբ ու աղոթքով նրանք ստանում են փիլոն եւ պատարագչի զգեստներ: Ձեռնադրության խորհուրդը՝ իր խորքին եւ լրումին է հասնում, երբ Սրբազանը սրբալույս մյուռոնով օծում է նորընծաների ճակատն ու ձեռքերը եւ շնորհում նրանց նոր անուններ, որոնք կրել են իրենց ժողովուրդներին ճշմարտության բոցավառ ոգով աներկյուղ առաջնորդած մեծ զորավարներն ու մարգարեները: Նոր

ձեռնադրվածները վերակոչվեցին Տ. Վարդան քահանա, Տ. Վաչե քահանա, Տ. Եսայի քահանա, Տ. Երեմիա քահանա, Տ. Մաղայիա քահանա, Տ. Զաքարիա քահանա և Տ. Դանիել քահանա:

Այս ձեռնադրությամբ եւս մեկ էջ է գրվում Վազգենյան դպրեվանքի տասնամյա տարեգրությունում: Պատարագի ընթացքին քահանայական իշխանություն ստացած սարկավագներն Արարատյան Հայրապետական թեմի Սեւանի Վազգենյան դպրեվանքի շրջանավարտներն են, որ դպրեվանքի հնգամյա դասընթացն ավարտելուց հետո՝ եւս մեկ տարի սովորել եւ ավարտել են Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանի վեցերորդ լսարանը: Ձեռնադրությամբ շնորհված իրենց իշխանությամբ նրանք այսուհետ առավել ջանասիրությամբ ծառայություն են բերելու Հայ Առաքելական Եկեղեցուն, հովվելու եւ ոտքի Աստված կյանքի ճանապարհ են առաջնորդելու մեր ժողովրդին: Իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերելով նորընծա քահանաներին, Արքազան Հայրը մասնավորաբար ասաց. «Մեծ է հոգեւոր ծառայության պատասխանատվությունը եւ դժվարին՝ հոգեւորականի ուղին. քահանան Հայ Եկեղեցու զինվորն է, եւ ծառայության մեջ է նրա երջանկությունը: Անվարան հավատքով եւ առ Աստված ապավինությամբ պիտի զորանաք՝ անսայթաք ծառայելու Մայր Եկեղեցուն ու մեր ժողովրդին»:

Ջերմորեն շնորհավորում ենք նորոգ օծյալ քահանաներին եւ բարեմաղթում արժանի մշակներ դառնալու Հայ Առաքելական Եկեղեցու՝ կարող գտնելու ծառայության երջանկությունը:

ԱՆԱՀԻՏ ԱՆՏՈՆՅԱՆ
Արարատյան Հայրապետական Թեմի
Մամլո Դիվանի տնօրեն

***Տ. ՎԱՐԴԱՆ ՔԱՀԱՆԱ ԳԱՓՈՅԱՆԸ** (ավազանի անունը՝ Տիգրան) ծնվել է 1973 թ. ապրիլի 23-ին Արարատի մարզի Ավշար գյուղում: 1979-1990 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում: 1991-96 թթ. ուսանել եւ ավարտել է Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցը, ապա 1996-97 թթ. ուսումը շարունակել է Էջմիածնի Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանում: 1991 թ. Ս. Աստեփաննոսի տոնին, ձեռամբ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ: 1997 թ. խմբագրել է «Տաթեւ» տարեգիրքը: 1997-98 թթ. աշխատանքի է անցել Ս. Սարգիս եկեղեցու առաջնորդարանում՝ վարելով մայր դիվանի պատասխանատու քարտուղարի պաշտոնը: 1998 թ. դեկտեմբերից պաշտոնավարության է անցել Սեւանի Վազգենյան դպրանոցում իբրեւ վերակացու:*

Տ. ՎԱՉԵ ՔԱՀԱՆԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ (ավազանի անունը՝ Արթուր) ծնվել է 1976 թ. օգոստոսի 10-ին Էջմիածին քաղաքում: 1983-1986 թթ. սովորել է տեղի թիվ 9 միջնակարգ դպրոցում: 1986-1991 թթ. սովորել է Սանկտ-Պետերբուրգի թիվ 2 միջնակարգ դպրոցում: 1992 թ. ընդունվել է Վազգենյան հոգեւոր դպրանոց, որն ավարտել է 1997 թ.: 1997-1998 թթ. ուսումը շարունակել է Էջմիածնի Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանում: Վազգենյան դպրանոցում ուսումնառության ընթացքում, 1996 թ. մայիսի 16-ին, ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի: 1998-1999 թթ. ծառայության է անցել Վեհարանում, որպես քարտուղար-սարկավագ: Սույն թվականի օգոստոս ամսից ծառայում է Արարատյան հայրապետական թեմի առաջնորդարանում որպես պատասխանատու-քարտուղար կրոնա-եկեղեցական հարցերի:

Տ. ԵՍԱՅԻ ՔԱՀԱՆԱ ԱՐԹԵՆՅԱՆԸ (ավազանի անունը՝ Արտակ) ծնվել է 1975 թ. նոյեմբերի 10-ին, Էջմիածնի շրջանի Պտղունք գյուղում: 1981 թ. հաճախել է տեղի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոց եւ այն ավարտել 1991 թ.: 1992թ. ընդունվել է Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոց, որն ավարտել է 1997 թ.: 1996 թ. մայիսի 16-ին ձեռնադրվել է սարկավագ՝ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի ձեռամբ: 1997-1998 թթ. ուսումը շարունակել է Էջմիածնի Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանում: Ճեմարանն ավարտելուց հետո, իբրեւ Մայր Աթոռի միաբան սարկավագ, ծառայել է Մայր Աթոռում (Գանձատանը): 1998 թ. ծառայության է անցել Արարատյան հայրապետական թեմում:

Տ. ԵՐԵՄԻԱ ՔԱՀԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ (ավազանի անունը՝ Հրաչ) ծնվել է 1975 թ. հունվարի 21-ին Էջմիածնում: 1981-1992 թթ. սովորել եւ ավարտել է Էջմիածնի Խ. Աբովյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցը: Այնուհետեւ 1992-ին, ընդունվել է Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոց, որն ավարտել է 1997 թ.: 1996 թ. մայիսի 16-ին, Ս. Համբարձման տոնին, ձեռամբ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ: Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցը ավարտելուց հետո, 1997-98 թթ. սովորել է Էջմիածնի Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանում: Ուսումը վերջացնելուց հետո աշխատանքի է անցել Ս. Էջմիածնի Վեհարանում որպես քարտուղար: Ամուսնացել է 1999 թ. հուլիսի 10-ին:

Տ. ՁԱՔԱՐԻԱ ՔԱՀԱՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆԸ (ավազանի անունը՝ Նորայր) ծնվել է 1974 թ. նոյեմբերի 26-ին Երեւանում: 1981 թ. ընդունվել է Երեւանի թիվ 14 միջնակարգ դպրոցը, որն ավարտել է 1991 թ.: 1992 թ. ընդունվել է Արարատյան հայրապետական թեմի Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոց, որն ավարտելով՝ 1997 թ., մեկ տարի՝ 1997-98 թթ., սովորել է Ս. Էջմիածնի Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանում: 1998 թ. անցել է ծառայության Արարատյան հայրապետական թեմի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնում, որպես գործավար: Այդ ընթացքում նույն թվականի օգոստոսի 30-ին, ձեռամբ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանի, ձեռնադրվել է սարկավագ: 1999 թ. հուլիս ամսից հոգեւոր ծառայության է անցել ազգային բանակում:

Տ. ՄԱՂԱՔԻԱ ՔԱՀԱՆԱ ՕՀԱՆՅԱՆԸ (ավազանի անունը՝ Ռոբերտ) ծնվել է 1974 թ. նոյեմբերի 22-ին Արարատ քաղաքում: 1981-1991 թթ. սովորել է տեղի թիվ 4 միջնակարգ դպրոցում: 1992-1997 թթ. սովորել է Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում: 1997-1998 թթ. ուսումը շարունակել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանում: Այնուհետեւ մեկ տարի, 1998-1999 թթ., անցել է ծառայության Արարատյան հայրապետական թեմի առաջնորդարանում, որպես պատասխանատու քարտուղար կրոնա-եկեղեցական հարցերի: 1998 թ. օգոստոսի 30-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանի: 1999 թ. հունիսից ծառայում է ՊՆ ռազմական ինստիտուտում որպես հոգեւոր խորհրդական:

Տ. ԴԱՆԻԵԼ ՔԱՀԱՆԱ ԲԱՂՈՒՄՅԱՆԸ (ավազանի անունը՝ Վարդան) ծնվել է 1975 թ. փետրվարի 6-ին Արարատի շրջանի Վեդի քաղաքում: 1982 թ. ընդունվել է տեղի թիվ 2 միջնակարգ դպրոց, որն ավարտել է 1992 թ.: 1992 թ. ընդունվել է Արարատյան հայրապետական թեմի Վազգենյան հոգեւոր դպրանոց, ավարտելով այն 1997 թ.: Եւս մեկ տարի, 1997-98 թթ., ուսանել է Էջմիածնի Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանում: Նույն տարում ծառայության է անցել Արարատյան հայրապետական թեմի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնում որպես գործավար: Այդ ընթացքում, օգոստոսի 30-ին, սարկավագ է ձեռնադրվել՝ ձեռամբ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանի: